

ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՇՈՒ 91 ԱՄԵԱՆԿԻ ՅԻՇԱՏԱԿՈՒԹԵԱՆ ԶԵՇԱՐԿԱՆԵՐ

ԳԻՏԱԺՈՂՄՎ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ISRAEL STUDIES ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՈՒՄ

Տասնիններորդ դարավերջին և բաներորդ դարավերջին Օսմանեան կառավարութիւնը պարբերաբար ծրագրուած ջարդեր էր իրականացնում հայ ազգաբնակչութեան շրջանում: Այդ ջարդերը իրենց զագաթնակետին հասան 1915 թու ականին, երբ բոլանդակ հայ ազգ ցեղասպան եղաւ, տարագրուեց հայրենի իր հողից և կոտրուեց Սիրիայի Դեր-Էլ-Զոր անապատում: Ցեղասպանութիւնից հրաշքով վերապարաճները ցորեցին աշխարհով մէկ: Այսօր նրանց սերունդները ենթարկում են ճերմակ ցեղասպանութեան: Թուրքը գործնականում ցեղասպանութիւնը աւարտեց 1923-ին, բայց այն դեռ շարունակում է վերապարաճների նոր սերունդների մէջ:

1915 թու ականը հայ ժողովրդի պատմութեան մէջ ներկուեց կարմիրով ու դաջուեց իրաքանչիր հայի յիշողութեան մէջ: Ամէն տարի ապրիլի 24-ին հայ ժողովրդը համախմբուած սգում է իր բիւրաւոր նահատակներին և բողոքի ձայն բարձրացնում Ցեղասպանութիւնը իրականացրած Թուրքիայի դէմ, միաժամանակ պահանջելով այսօրուայ բաղարակիթ աշխարհից ցեղասպանութեան ճանաչումը և դատապարտումը: Հայկական բոլոր զարթօնահմերում կավճակերպարում են բողոքի ցոյցեր և սպահանդէմներ, իսկ եկեղեցիններում մատուցում են սգոյ պատարագ և հոգեհանգստան արարողութիւն:

Երուսաղէմում, Ցեղասպանութեան 91 ամեակին նուիրուած առաջին ճեռնարկը մէկնարկեց Ապրիլի 5-ին, Երուսաղէմի Israel Studies հաստատութիւնում: Գիտաժողովի առաջին բանախօսը Պրոֆ. Արքահամ Տէրեան էր, որի թեման էր «Ցեղասպանութեան վերապողուները Երուսաղէմում»: Հայ Պր. Տէրեան՝ վերապողուները գրկաբաց չեն ընդունուել բնիկ սաղինակայերի կողմից, այն աստիճան, որ բնիկները նոյնիսկ մերժել են իրենց դաստիերին կնութեան տալ զաղթականներին: Աւելին, զաղթականները բնիկների հետ մէծ դժուարութիւններ ունեցել հաղորդակցուելու՝ լեզուական տարբերութիւնների պառնառով: Սակայն առաջին իսկ օրից նրանց օգնութեան ձեռք է մէկնել Հայոց Պատրիարքարանը, որը ոչ միայն հոգացել է նրանց հոգեւոր կարիքները, այլև ապահովել նրանց բնակարաններով և կերակրուով:

Յաջորդ բանախօսը Պրոֆ. Ժորժէ Աւագեանն էր, որի թեման էր «Հայկական համայնքները Խրայլում»: Իր բանախօսութեան մէջ Պրոֆ. Աւագեանը շեշտուեց ազգային ինքնութեան պահպանան կարեւորութիւնը, որն էլ, ըստ նրա, պիտի համայնքանայ մէր գոյատեման գուաւականը: «Հայ ապօք գուեթէ կէսը կոտրուեց 1915 թու ականին, այդուհանելով հայի ոգին ու ինքնութիւնը չկոտրուեց: Մեր նոր սերունդին մէնք դաստիարակում ենք այնպէս, որ նրանք ենենք յիշելով համտեր՝ հպարտանան նաեւ մեր ազգային ինքնութեամբ», - իր խօսքում ասաց բանախօսը: Նա շարունակելով իր խօսքը նշեց. «Այսօրուայ մէր պայքարը միայն մի նպատակ չի հետապնդուն: Այս՝ նաև և առաջ Թուրքիային ստիպել, որպէսի վերջինս ճանաչի հայոց Ցեղասպանութիւնը, սակայն այն պայքար է նաեւ մոռացումի և ազգային ինքնութեան կորուափի դէմ»:

Գիտաժողովի երրորդ բանախօսը Գերշ. Արիս Եպս. Շիրվանեանն էր: «Յովիհաննէս-Պողոս II Պապը 2001 թու ականին ճանաչեց Հայոց Ցեղասպանութիւնը և երբ նա այցելեց Ցեղասպանութեան պոհերի յիշատուկին նուիրուած Շիծեննակաբերդի յուշահամալիր, աղօթեց նրանց հոգինների հանգստութեան համար: Նրա օրինակին հետեւելով, 2005 թու ականին Հայոց Գարեգին Բ. Վեհափառ Կաթողիկոսի հրաւերով Հայաստան ժամանած Ռաբունապետ Իոնա Մեցգերը ես այցելեց Շիծեննակաբերդի յուշահամալիր և արտօսանեց այն աղօթը, որը կատարուում է Հոլորուսի պոհերի յիշատուկի օրը: Խրայէի հոգեւոր պետը ճանաչուում և դատապարտում է Հայոց Ցեղասպանութիւնը, սակայն Խրայէի պետութիւնը դեռ պաշտօնապէս չի ճանաչել Հայոց Ցեղասպանութիւնը, հակառակ այն փաստին, որ աւելի բան բան

պեսութիւններ արդէն ճանաչել և դատապարտել են Հայոց Յեղասպանութիւնը», - իր խօսքում նշեց Սրբազն Հայոց:

Գիտաժողովի վերջին բանախօսը Յափր Յաքանն էր: Ըստ նրա՝ Հայոց ցեղասպանութեան ճանաչումը ոչ միայն կը նուագեցնի նման ողբերգութեան կրկնման հաւանականութիւնը, այլ նաև այն կը խորացնի նման ողբերգութիւն անցած ապօերի կապը: «Խարայէլը, որը տարածաշրջանում Թուրքիայի հզօր ու պիմավարական գործընկերն է, կարող է մեծ ճնշում բանեցնել վերջինիս վրայ Հայոց Յեղասպանութիւնը ընդունելու համար: Աւելին, այսօր, երբ Թուրքիան ցանկանում է անդամակցել Եւրոպական Միութեանը, Հայոց Յեղասպանութեան ճանաչումը այդ անդամակցութեան իր նախապայման պէտք է յայտարարուի», - իր խօսքը աւարտեց Պր. Յաքանը:

Յափր Յաքանի բանախօսութեամբ գիտաժողովը աւարտուեց: Ի դեպ, գիտաժողովի ներկայ էին մեծ թուով հայեր և օտարներ: Յաջորդ օրը, գիտաժողովին անդրադարձել էր նաև հրեական օրաթերթերից մէկը:

ՍԳԱՀԱՆԴԵՍ ԺԱՌԱՎԳԱՔՈՐԱՑ ՎԱՐԺԱՐԱՆՈՒՄ ԵՒ ՍԳՈՅ ՊԱՏԱՐԱԳ ՄՐԲՈՑ ՅԱԿՈԲԵԱՆՑ ՄԱՅՐ ՏԱՀԱՐՈՒՄ

Երկուշաբթի, Ապրիլի 24-ի երեկոյեան, Ժառանգաւորաց Վարժարանի Սրահում տեղի ունեցաւ Հայոց Սեծ Եղեռնի 91 ամեակին նուիրուած սգահանդէս: Ներկաները նախ մէկ րոպէ ուղնկայս լուրթեամբ յարգեցին փոկերի յիշատակը: Ապա Պատրիարք Սրբազնը արտասանեց համստեան աղօթքը, որին յաջորդեց Հոգ. Նորայր Աբդ. Գալիկեանի բացման խօսքը:

Սգահանդէսի ընթացքում բանախօսութեամբ ելոյթ ունեցան Տիարք Գէորգ Բաղդիշեանը և Գորդ Հնիդիշեանը՝ «Հայոց Սեծ Եղեռնը, Սեմք և Աշխարհը» և «Յեղասպանութիւնը և Ապազայ Հեռանկարները» թէնմաներով, յաջորդաբար: Երկու բանախօսների խօսքերուն կային ընդհանրութիւններ. Նրանք ցան յայտնեցին, որ այսօր հայկական կողմում ցեղասպանութեան և միջազգային իրաւունքի բարձրագոյն կրթութիւն ստացած մասնագիտների մեծ պակաս կայ: Ըստ նրանց՝ այսօրուայ հրանշականն է հնարաւորինս սեղմ ժամանակամիջոցուն պատրաստել ցեղասպանութեան և միջազգային իրաւունքի մասնագիտներ, որոնց առկայութեան դէպում մէյ պայքարը էլ ատէլ կը դիրքանայ և կարելի է արդինքի համեմ կարճ ժամանակամիջոցում: Ելոյթ ունեցաւ նաև Տիարք Վիգէն Լէփէճեանը (Հ. Ե. Մ.): Այսուհետեւ ասմոնքեցին Բարչ. Գրիգոր Սրկ Աւագեանը և Յամիկ Գալամեանը: Հնչեցին նաև դաշնամուրի և երգի կատարումներ. Գրիգոր և Գորդ Կէմէկիշեան եղբայրները վոյզ արմագով, իսկ Արփի Նազաշեան «Հայրենի Վարդ» իմբնագիր խօսքով և երգով: Սգահանդէսի աւարտին փակման խօսքով հանդէս եկան Պատրիարք Սրբազնը, ով իր խօսքում կարեւորեց Հայոց Յեղասպանութեան միջազգային ճանաչմանը ուղղուած քայլերը և մասնաւորապէս նշեց: «Այնքան ժամանակ քանի դեռ Թուրքիան չի ճանաչի Հայոց Յեղասպանութիւնը և քաղաքակիրթ աշխարհը իր կրաւորական և անուարել կեցու ածքով կը հանդուրժի Թուրքիայի այդօրինակ վերաբերմունքը, իսայ ժողովուրդը պիտի շարունակի պայքարել հայոց Յեղասպանութեան միջազգային ճանաչման համար: Մեր ջանքերը համառեղեղով պիտի համեմնք նրան, որ աշխարհը ճանաչի Հայոց Յեղասպանութիւնը և ընդունի այն իր մարդկութեան դէմ կատարուած ծանրագոյն յանցամքը»:

Սգահանդէսը աւարտուեց Հայր Մերի խմբային երգեցողութեամբ և Պահպանիով:

Երեքշաբթի, Ապրիլ 25-ին, Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարում մատուցուեց սգոյ Պատարագ, իսկ Պատարագի աւարտին Յեղասպանութեան փոկերի յիշատակին կատարուեց Հոգեհամագուեան արարողութիւն: (Այս տարի Ապրիլ 24-ը համընկել էր Ուխտաւորաց Պատարագին, այդ իսկ պատճառով Եկեղեցական արարողութիւնները կատարուեցին Ապրիլ 25-ին): Այնուհետեւ կազմուեց սգոյ թափօր: Հոգեւոր Հայրերի և Պատրիարք Սրբազնի համդիսապեսութեամբ թափօրն ուղղուեց դէպի Սուրբ Փրկչի վանքում գտնուող

Արարայի յուշարձան, որ եւ կատարուեց հոգեհանգստեան արարողութիւն, որի աւարտին Երուսաղէմի Հայերի Քարեսիրական Սիութեան անոնից ելոյթ ունեցաւ Փոյխն Ալեմեանը:

Կ. ՊՈԼՍՈՅ ՊԱՏՐԻԱՐՔ ԱՍԵՆԱՊԱՏԻ Տ. ՄԵՍՐՈՊ ԱՐՁԵՂՍ. ՄՈՒԹԱՁԵԱԸ ԱՅՑԸ ԵՐՈՒՍԱՂԵՍ

Հստ աւանդութեան՝ Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանը Յարութեան տօնը նշում է ին ստուարով, որը պայմանաւորուած է Երուսաղէմի Սրբավայրերու գործող status quo-ի դրութեամբ: Այս տարի Երուսաղէմում Քրիստոսի հրաշափառ Յարութիւնը տօնախմբուեց Ապրիլի 23-ին:

Ապրիլի 16-ին Տիրոց Յարութեան օրինաբեր աւետիսը արդէն մէկ անգամ ստուար Ա. Պոլսոյ Ամենապատի Պատրիարք Տ. Մեսրոպ Արքեպոս. Մութաֆեանը Աւագ Ուրբաթ, Ապրիլի 21-ին ժամանեց Երուսաղէմ նաև մեզ հետ մանակցելու Սուրբ Յարութեան հոգեպարագ արարողութիւններին և բաժնեկիցը դաշնալու տօնի օրինաբեր շնորհներին:

Ապրիլի 20-ին Կ. Պոլսոյ Երուսաղէմ էին ժամանել արդէն Հոգ. Տ. Եղիշէ Արդ. Ուչրոնեանը, Հոգ. Տ. Զարէն Արդ. Օհանեանը, Հոգ. Տ. Զատիկ Արդ. Պատիկեանը ինչպէս նաև մի խումբ ուխտաւոր հաւատացեալներ:

Հիւր հոգեւորականները եւ ուխտաւորները Աւագ Հինգշաբթի մասնակցեցին Ունկուայի արարողութեանը, Ուխտաւորաց թափօրին և Խաւարնան հկումին: Աւագ Ուրբաթ Ամենապատի Մեսրոպ Արքեպոս. Մութաֆեանի համդիսապետութեամբ, նրանք մասնակցեցին Թաղման Կարգին: Յաջորդ օրը, Աւագ Շաբաթ, Պատրիարք Սրբավանը համդիսապետեց Սուրբ Յարութեան թափօրին և Լոյսի արարողութիւնը, իսկ Զատիկի առաւոտեան նա սուրբ և անմահ պատուագ մասուցեց Քրիստոսի Գերեզմանի վրայ և տուեց Յարութեան աւետիսը: Նոյն օրը Երեկոյեան "Christmas" հիւրանոցում տեղի ունեցաւ հրամեշտի ընթրիք՝ Պատրիարք Սրբավան Հօր և նրան ուղեկցող հոգեւորականների և ուխտաւորների հետ:

Ապրիլի 25-ին Պատրիարք Սրբավանը և նրան ուղեկցող հոգեւորականները և ուխտաւորները վերադարձան Թուրքիա:

Ի դէպ նշենք, որ այս տարի Պատրիարքարանի հրաւերով հիւր հոգեւորականներ էին ժամանել Երուսաղէմ նաև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից: Նրանց թուում էին Գերշ. Տ. Տարոն Եպոս. Ճերէճեանը (Ֆրանակայից), Կոտայքի Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Առաքէ Եպոս. Քարամեանը, Կանադայի Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Բագրատ Եպոս. Գալատեանը, Հոգ. Տ. Յովհաննէս Արդ. Սայիկեանը (Յունատան), Հոգ. Տ. Խորէն Արդ. Զաքարեանը և Արծն. Տ. Եղիշէ Աւագ Քահանայ Սարգսեանը: Հայաստանից ժամանել էին նաև մի խումբ ուխտաւորներ Արժանապատի Տ. Գրիգոր Ռին. Յովհաննէսեանի և Տ. Դանիէլ Ռին. Բաղրմեանի ուղեկցութեամբ: Իրենց կարճ կեցութեան ժամանակամիջոցին Հիւր հոգեւորականները մասնակցեցին եկեղեցական արարողութիւնների, համդիսապետուցին մի շաբթ արարողութիւններ և մասուցեցին ուխտի պատուագներ: Ուխտաւոր հաւատացեալները եւս մասնակցեցին եկեղեցական արարողութիւններին, ինչպէս նաև առիջ ունեցան այցելել Երուսաղէմի և Բերդեկեմի սրբավայրեր, Մեռեալ ծով և Գալիկեայի շրջան, ուր ծանօթացան պատմանշակութային արժեք ներկայացնող հնութիւններին և քրիստոնէական սրբավայրերին:

Զատիկի արարողութիւններին նաև այս տարի ուխտաւորներ էին ժամանել նաև Ամերիկայի Միացեալ Նահանգներից Տ. Մարտիրոս Աւագ Ռին. Չեւեանի ուղեկցութեամբ և Կանադայից՝ Առաջնորդ Գերշ. Տ. Բագրատ Եպոս. Գալատեանի ընկերակցութեամբ:

Հիւր հոգեւորականները եւ ուխտաւորները, իրենց ուխտը նորոգած և հոգեկան մեծ լիցք ստուար, վերադարձան իրենց երկրները տօնական շրջանի աւարտին:

**ՍՐԸՈՑ ՎԱՐԴԱՍԱԸՑ ԴՂԲԱՑ ՀԱՍ ԵՐԳՉԱԽՈՒՄԲԻ ՀԱՍԵՐԳԸ
ԵՐՈՒՍԱԿԵՄՈՒՄ**

Աւագ Զորեքշաբթի, Ապրիլի 19-ին, ուխտառաբար Երուսաղէմ ժամանեցին Ֆերիզիսի Սրբոց Վարդանանց Երգախումբը:

Երգախումբի անդամները մասնակցեցին Եկեղեցական արարողութիւններին և կատարեցին Ճրագալոյցի և Զատկի պատարագմերի երգեցողութիւնը, իսկ Աւագ Ուրբաթ, Ապրիլի 21-ի երեկոյեան երգախումբը ելոյթ ունեցաւ Ժառանգառաց Վարժարանի Սրահում Նրանք փայլոն և արհեատավարժ կերպով կատարեցին Կոմիտաս Վարդապետի, Բարսէ Կամաչէանի և որից հայ երգահանների երգեր: Համերգի ընթացքում մասուցուեց նաև անակնկա: Յայտազրի եօթերորդ համարում, որտեղ չեղ նշած երգի և երգահանի անոնները, նրանք կատարեցին Երուսաղէմի Պատրիարք Սրբազնի դաշնաւորած «Հայ Ապրիլ» երգը:

Համերգի ընթացքում ելոյթ ունեցաւ նաև երգախումբի ղեկավար Տիար Հայկ Գահուէճեանը, ով նշեց, որ շուտով լրանում է երգախումբի հիմնադրման 75 ամեակը և ծրագրուած է երգախումբի բավարի համերգներ Սփիտորի տարբեր գաղթօճախմներում: «Մենք հպարտ են զգում, որ հոբելանական տօնակատարութիւնների բացումը կատարուեց Երուսաղէմում», - իր խօսքուն նշեց Տիար Հայկ Գահուէճեանը:

Երգախումբի խմբավարն էր Տիար Աստուշան Հալաճեանը, իսկ երգեհոնահարը՝ Տիկ. Լուսի Գահիկճիօղոլուն:

Համերգին մասնակցում էին Երուսաղէմի և Կ. Պոլսոյ Պատրիարքները, միաբան հայրերը, ուխտառները և մեծ թուով սաղիմահացեր: Համերգի աւարտին փակնան խօսքով համելս եկա Երուսաղէմի Պատրիարք Սրբազն Հայրը, ով շնորհաւորեց Երգախումբի անդամներին իրենց յոթելիանի առթիւ և յաջողութիւն մաղթեց իրենց բոլոր ծրագրերուն:

Համերգը աւարտուեց Հայր Մերի երգեցողութեամբ և պահպանիչով:

**ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՇՈՒ 91 ԱՍԵԱԿԻՆ ՆՈՒՐՈՒԱԾ ՅՈՒԾ-ԵՐԵԿՈՅ
ՀՐԵԱԿԱՆ ՀԱՍԱԼՍԱՐԱՆՈՒՄ**

Զորեքշաբթի, Ապրիլի 26-ին Հայագէտ Պրոֆ. Մայր Սյոնի նախաձեռնութեամբ, Երուսաղէմի Գիլատ Ռամի հրեական համալսարանում տեղի ունեցաւ Հայոց Ցեղասպանութեան 91 ամեակին նուիրուած յուշ-երեկոյ: Առաջին բաժինը սկսուեց Պրոֆ. Սյոնի բացման խօսքով: Ապա Տիար Յոսի Երրայերէնով ընթերցեց Եպիկիլ Մարգարէի գրքի 37-րդ գլուխը: Նոյն բաժինը հայրէն ընթերցեց Հոգ. Տ. Բագրատ Վրդ. Պուրճէքեանը: Այնուհետեւ ողջոյնի և յիշատակնան խօսքով համելս եկան Երուսաղէմի Պատրիարք Սրբազն Հայրը, Հայատանի Համբապետութեան հիմապատս Տիար Յօլակ Սոմճեանը և Հրէական Համալսարանի Հիմնախոտար առարկաների ֆակուլտէտի տնօրին Պրոֆ. Սրիվըն Կափլանը: Առաջին բաժինը աւարտուեց Հոգ. Տ. Գուսան Վրդ. Ալճանեանի երկու երգերի գեղեցիկ կատարմամբ:

Երկրորդ բաժինի գլխաւոր բանախօսը կրթութեան նախակին նախարար Տիար Յոսի Սարին էր: Իր խօսքուն Տիար Սարինը ամերադաւ Պրոֆ. Եաիդ Օրոնի «Ուրացում, Խրացէլը ու Հայոց Ցեղասպանութիւնը» գրքին: Նա բարձր զնահանուց Պրոֆ. Օրոնի աշխատաթիւնը և յոյս յայտնեց, որ Խրացէլի նոր կառավարութեան կրթութեան նորանշանակ նախարարուիին կեանքի կը կոչի դեռ իր պաշտօնակարութեան շրջանին Հայոց Ցեղասպանութեան թեմայի դաստանդումը կրթական համակարգում ընդորկելու ծրագրիրը:

Բանախօսութիւնից յետոյ դուդուկի կատարմամբ համելս եկա Աշուտ Սահակեանը:

Յուշ-երեկոն աւարտուեց Պրոֆ. Աբրահամ Տէրեանի Եպիկափակիչ ելոյթով:

ՊՐՈՖ. ԱԲՐԱՀԱՍ ՏԵՐԵԱՆԻ ԴԱՍԱԽՈՍՈՒԹԻՒՆԸ ԵՐՈՒՍԱՂԵՍՈՒՄ

Ուրբաթ, Ապրիլի 28-ի երեկոյեան ժառանգաւորաց Վարժարանի փոքր պրահում տեղի ունեցաւ Պրոֆ. Աբրահամ Տէրեանի դասախոսութիւնը, որի թեման էր Սր. Գրիգոր Տաթեաւցու «Գիրք Հարցմանց»ի կառուցու ածըն:

Պրոֆ. Տէրեանը սեղմ ժամանակի ընթացքում մանրանան ներկայացրեց գրի կառուցու ածըն, ինչպէս նաև պատասխանեց բոլոր հարցու մներին:

Դասախոսութեանը ներկայ էին Պատրիարք Սրբազն հայոք, Սիարան Հայրերը, Ժառանգաւոր ասմերը և Կոկիկ թուով սաղինահայեր:

Դասախոսութեանը աւարտին Պատրիարք Սրբազն Հայրը համդէս եկաւ փակման խօսքով: Սրբազն Հայրը իր գնահատանը ու շնորհաւորանը յայտնեց Պրոֆ. Տէրեանին եւ իր խօսքում կարեւորեց նման ձեռնարկների պարբերաբար կավճակերպումը Երուսաղէմի համայնքում:

Դասախոսութիւնը աւարտուեց Հայր Մերի երգեցողութեամբ եւ պահպանիչով:

ՊՐՈՖ. ԱԲՐԱՀԱՍ ՏԵՐԵԱՆԻ ԴԱՍԱԽՈՍՈՒԹԻՒՆԸ ԺԱՌԱՆԳԱԽՈՐԱՅ ՄՐԱՀՈՒՄ

Երկուշաբթի, Յունիսի 5-ին Երուսաղէմի Ժառանգաւորաց Վարժարանի Սրահում դասախոսութեամբ հանդէս եկաւ Պրոֆ. Աբրահամ Տէրեանը, որի թեման էր Կորինի «Վարք Մաշտոցի» աշխատութիւնը եւ որը նուիրուած էր Գրեքի Գիտի 1600 ամեակին:

Դասախոսութեան ընթացքում Պրոֆ. Տէրեանը մանրանանօրէն ներկայացրեց Կորինի աշխատութիւնը կառուցու ածքային, լեզուական եւ ժամրային տեսակիններից: Ըստ նրա՝ Կորինի աշխատութիւնը պատմագրական կամ ժամանակագրական երկ չէ: Այն չի համապատասխանում նաև Վարքագրական չափանիշներին: Նրա հաւատամամբ Կորինի երկը համապատասխանում է հինգերորդ դարում լայն տարածուած գովարանական ժամրին:

Դասախոսութեան աւարտին փակման խօսքով հանդէս եկաւ Պատրիարք Սրբազն Հայրը, ով նախ շնորհակալութիւն յայտնեց այդքան շահեկան դասախոսութեան համար եւ ափսոսանը յայտնեց, որ իր ընդիհանուր խիստ ժամանակացոյցի պատճառով Պրոֆ. Տէրեանը չկարողացաւ աւելի շատ թիսով դասախոսութիւններով հանդէս գալ, ինչը նաև դասախոսի փափաքն էր:

Դասախոսութիւնը աւարտուեց Հայր Մերի երգեցողութեամբ եւ պահպանիչով:

ԿՈՐԻՆ ԱԲՌ. ԲԱՂԻԱՍԱՐԵԱՆ